ՎԻՔԻՊԵԴԻԱ
Ազատ հանրագիտարան

Մանավազ Հայկազունի

Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից

Անվան այլ կիրառումների համար տե՛ս՝ Մանավազ (այլ կիրառումներ) (https://hy.wikipedia.org/wiki/Մանավազ_(այլ_կիրառումներ))

Մանավազ Հայկազունի նաև **Մանաւազ**, **Մանազաւ**[1] (ծննդյան և մահվան թվականներն անհայտ), Հայկ նահապետի երրորդ որդին, Արամանյակի, Խոռի և Ապահի եղբայրը, Բազի, Ոլդի և Հունի հայրը, Մանավազյանների նախաբարական տան հիմնադիրը[2][3][4][5][6]:

Մանավազ Հայկազունի Մանաւազ
Մանավազյանների նահապետ
Ազգություն հայ
Դինաստիա Հայկազունիներ
Հայր Հայկ Նահապետ

Կենսագրական տվյալներ

Ըստ Մովսես Խորենացու Արամանյակը՝ իր եղբայր Մանավազին, նրանց մյուս եղբորը՝ Խոռին և Մանավազի որդիներ՝ Բազին և Ոլդին, իրենց ամբողջ ընտանիքով թողնում է Հարքում: Մանավազը ժառանգում է Հարքը, իսկ նրա որդին Բազը ժառանգում է Վանա լճի (ողի ծով) հյուսիսարևմտյան ափը: Բազը գավառը իր անունով կոչում է Բզնունիք, իսկ ծովը՝ Բզնունյաց ծովը[2]: Մովսես Խորենացին նույն տեղում ավելացնում է.՝

> «Ասում են, որ սրանցից են առաջ եկել Մանավազյան և Բզնունյաց նահապետությունները, նաև Որդունի կոչվածը, որոնք վերջերս, սուրբ Տրդատից հետո, մեկը մյուսին ոչնչացրին պատերազմով:

Այս հատվածում հաստատվում է Մանավազից՝ Մանավազյանների, նրա որդի Բազից՝ Բզնունիների, իսկ մյուս որդի Ոլդից Ոլդունիների նախաբարական տոհմերի հիմնադրումը:

Մանավազյան տոհմի վերացումը

Ըստ Բրիստոնեական պատմագրությունում ընդունված վարկածի, 330-ական թթ Մանավազյանները վիճելի կալվածքների համար անհաշտ կռիվներ են մղել իրենց ազգակից Իշխանական տոհմերի՝ Բզնունիների ու Որդունիների դեմ: Զկարողանալով հաշտեցնել կռվող կողմերին՝ Խոսրով Գ Կոտակ թագավորի հրամանով սպարապետ Վաչէ Մամիկոնյանը ոչնչացրել է նրանց և բռնագրավել տիրույթները: Հարք գավառը տրվել է Ապրլանոյանների եպիսկոպոսական տոհմին[7]: Իրականում, Խոսրով Գ թագավորի կազմակերպած սպանդի հնարավոր պատճառները այլ էին, քանի որ Մանավազյանների Իշխանական կալվածք Հարքը չէր սահմանակցում ոչ Ոլդունիքին (Բասեն գավառ), ոչ էլ Բզնունիքին:

Մանավազակերտի հիմնումը

Ըստ Մովսես Խորենացու Մանավազը հիմնել է քաղաք, որը իր անունով կոչվել է Մանավազակերտ, որից կրճատմամբ առաջացել է Մանազկերտ անունը: Մինչև 4-րդ դարը այն եղել է Մանավազյանների արքունիքը[8]:

Ըստ Ղևոնդ Ալիշանի Մանավազը ժառանգում է Հարքը, իսկ նրա եղբայր Խոռը հաստատվում է Հարք գավառի արևելյան մասում, որը հետագայում կոչվում է Ապահունիք ու այդ գավառի հյուսիսային մասը (Խորխորունիք) շեհացնում: Այս երկու գավառների նահանգամեջում (Հարք, Ապահունիք), Արածանի գետի վտակներից մեկի մոտ հաստատվում է Մանավազը, հետո բնակավայրը ընդարձակվելով ու ամրանալով մեծ և նշանավոր քաղաք է դառնում, որը մինչև հիմա գոյություն ունի և հայտնի է Մանազկերտ անունով: Ղևոնդ Ալիշանը ավելացնում է՝.

> ... որով (Մանազկերտ) և Հայաստանի ամենէն հին և մնացեալ քաղաքն է, 4000 տարիէ աւելի ըլլալով սկիզբն, որոյ չտի հին խիստ քիչ քաղաք կայ բոլոր երկրիս վրայ. յայտնի է որ անոնց պէս այս այլ փոխեալ է և առաջին շինուածքին հետքն գտնել դժվար է, սակայն նոյն անունը և տեղն պահած, և միւտ բնակուած և շինուած է[1]:

Ի տարբերություն իր եղբայրներ Արամանյակի և Խոռի, որոնք գնացել էին դեպի հյուսիս, Մանավազը ոչ միայն ժառանգեց իր հոր՝ Հայկի ոստանը, այլ ինչպես երևում է չհեռացավ: Մանավազի անունը մնաց այդ և մերձակա գավառների վրա և հարավում հայտարարվեց որպես «տուն Մանաւազայ կամ Միհայ»[9]:

Անվան ստուգաբանություն

Ըստ Ղևոնդ Ալիշանի Մանավազ (Մանաւազ, Մանազաւ) անունը սանսկրիտերենից թարգմանած նշանակում է Մանավաս - մարդիկ: Ման, մեն (որից Ար-մեն-ակ) անունով սկսվում և ավարտվում է Մանավազ Հայկազունու որդու՝ Բազի անունով[1]:

Ընտանիքը

Մանավազը ունեցել է երեք հայտնի որդի՝

- Բազ, Բզնունիների նախաբարական տան նահապետը[1][2]
- Որդ, Որդունիների նախաբարական տան նահապետը[10]
- Հուն (Հոն), ըստ ենթադրության Ապահունիք գավառի հիմնադիրն է և Մանավազի որդին[1]

Ծանոթագրություններ

1. «Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան», Ղևոնդ Ալիշան, Վենետիկ, 1904, էջ 159
2. «Հայոց Պատմություն», Մովսես Խորենացի, 1961, Երևան, Գլուխ Ա. ժբ
3. «Հայոց պատմություն», Ուխտանես, Ա. ժզ
4. «Ազգաբանութիւն Հայոց», Մինաս Ամդեցի, էջ 3
5. «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Սամուել Անեցի, էջ 42
6. «Հայոց անձնանունների բառարան», Հրաչեայ Աճառեան, Երևան, 1942, Հատոր 3, Յուցակ 1, էջ 196-197
7. «Հայկական սովետական հանրագիտարան», խմբագիր՝ Վիկտոր Համբարձումյան, Երևան, Հայ սովետական հանրագիտարան հրատարակչություն, 1981. էջ 214-215
8. «Հայաստանի և հարակից երջանների տեղանունների բառարան», Հատոր 3, Յուցակ 1, էջ 679
9. «Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան», Ղևոնդ Ալիշան, Վենետիկ, 1904, էջ 160
10. «Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան», Ղևոնդ Ալիշան, Վենետիկ, 1904, էջ 161

Տես նաև

- Մանավազյաններ
- Բզնունիներ
- Որդունիներ
- Ապիաբենե
- Հարք
- Մանազկերտ

Աղբյուրներ

- «Հայոց անձնանունների բառարան», Հրաչեայ Աճառեան, Երևան, 1942, Հատոր 3, Յուցակ 1, էջ 196-197
- «Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան», Ղևոնդ Ալիշան, Վենետիկ, 1904, էջ 159
- «Հայոց Պատմություն», Մովսես Խորենացի, 1961, Երևան, Գլուխ Ա. ժբ, Բ. է
- «Հայոց պատմություն», Ուխտանես, Ա. ժզ
- «Ազգաբանութիւն Հայոց», Մինաս Ամդեցի, էջ 3
- «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Սամուել Անեցի, էջ 42, 49
- «Տիեզերական պատմություն», Ստեփանոս Ասողիկ, Ա. է
- «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 90
- «Հայկական սովետական հանրագիտարան», խմբագիր՝ Վիկտոր Համբարձումյան, Երևան, Հայ սովետական հանրագիտարան հրատարակչություն, 1981. էջ 214-215
- «Հայաստանի և հարակից երջանների տեղանունների բառարան», Հատոր 3, Յուցակ 1, էջ 679

Ստացված է «https://hy.wikipedia.org/w/index.php?title=Մանավազ_Հայկազունի&oldid=7817623» էջից